



ö þ ð z ü ø

ՃՔԲàŌàòĀŪàòŪÆò , àòðê [Ran out of memory]

Խաչիկ Կարապետյանին

Ես տուն էի եկել սովորական ժամին, ավելի ճիշտ՝ սովորականից էլ շուտ: Առավոտ իմացել էի, որ մահացել է հարազատներիցս մեկը՝ մի հիանալի կին, որի տղան ուշք չէր դարձնում հասակն առած մորը: Ուզում էի բոլորին բացատրել, թե ինչ պիտո էր, ու ինչպես տղան չէր գնահատում նրան: Ինչ-որ աշխատելս էլ չէր գալիս, բայց ոչ մեկին չկարողացա կտրել գործից, որ մի-երկու բաժակ խմելիք-խոսելիք-թեթևանայի: Հետո թողեցի-տուն եկա: Ընթրիք դրեց: Կերա՞-չկերա՞: Պատկեցի անկողնում, ժամը տասը չկար, մի քիչ հեռուստացույցի ալիքները փոխեցի ու քնեցի:

Որ գարթեցի, վառեցի կոդքիս լույսը, նայեցի տեսա, որ դեռ կեսգիշեր էլ չէ՝ ժամը տասնմեկն անց կես էր: Ի՞նչ էր պատահել, ի՞նչ վիճակում էի, որ չկարողացա քնել. տուն էի եկել սովորական ժամին, ավելի ճիշտ՝ սովորականից շուտ, առավոտ իմացել էի, որ մահացել է հարազատներիցս մեկը՝ մի հիանալի կին, որի տղան ուշք չէր դարձնում տարեց մորը, գործի տեղն ամեն ինչ նույնն էր. մանր-մունր տհաճ խոսակցություններ եղան-անցան... բայց աշխատելս չէր գալիս, ու սովորականի պես երկար չմնացի՝ շուտ եկա տուն:

Միայն թե լավ բաներն էլ չմոռանամ: Օրինակ, հաստատվեց լուրը, որ նոր համակարգիչ եմ ստանալու՝ հզոր հիշողությամբ: Նոր հերոսներիս ավելի արագ կարող եմ մարմնավորել, հեշտ ու սահուն կշարժվեն: Երկար կապրեն:

Հետո, քիչ մնաց՝ շուտով աշխատավարձ եմ ստանալու: Կզնամ երկու հատ ճոճաթոռ կառնեմ՝ տեղն իմացել եմ: Եղբայրս ամառանոցի համար խոստացած փողը կուղարկի, փոքրիկ ամառանոց կառնեմ, վերջապես կիեռանամ էս տնից, սիրածս կինը կտեղափոխվի ինձ մոտ, ճոճաթոռները կդնենք դրսում, սուրճ կխմենք, ինքը կգործի, կրթլա ականջիս տակ, իսկ ես ուղղակի մայրամուտին կնայեմ՝ հոգնել եմ:

Ուզեցի հիշել դեմքը, բայց աչքերիս առաջ չեկավ: Ուզեցի վերջերս հնարած կերպարներիս մտաբերել, բայց հիշողությանս առաջ սովորականի նման գունավոր ու շարժուն չբացվեցին: Ես վերցրի առաջին պատահած թուղթն ու գրեցի.

Հետո ինձ ասվեց.

Պու այնքան էիր ուզում տղա ունենալ, որ Մենք ուղարկեցինք մի հրեշտակի, որ իրագործի քո երազանքը:

Նա ինձ մոտ մնաց 8 տարի: Իսկ հետո՝ հեռացավ:

Այնժամ ես հասկացա, որ ինձ տրված էր որոշ ժամանակ՝ գոյություն քարշ տալու համար:

Իմ ճյուղը կտորվեց, ինձ ոչնչացրին ժամանակի մեջ:

Ես արդեն չկամ:

Երբ նույն տարի գնացինք գերեզմաններ՝ ճյուն էր գալիս: Պա փառահեղ ճյուն էր՝ մեծ փաթիլներով և արագ: Գերեզմանոցում ոչ մի ոտնահետք չկար: Կար միայն մի ոտնահետք, որ գնում էր դեպի իմ տղայի գերեզմանը: Հետո մենք հանդիպեցինք մի 17-18 տարեկան տղայի: Գերեզմանոցում այլևս ոչ ոք չկար: Նա ինքը մոտեցավ մեզ և հարցրեց.

Ճիշտ է արդյոք, որ պետք է գերեզմաններ գալ Չատիկի հաջորդ օրը:

Մենք ասացինք.

Այո:

Նա հեռացավ:

Միայն շատ հետո իմ մտքով անցավ, որ այդ տղան նույնպես ուղարկված էր որպես բանբեր՝ հասկացնելու համար, որ իմ տղան տրված էր ինձ ինչ-որ ժամանակով, որը լրանալուց հետո՝ հեռացավ:

Գա բանբեր էր:

Եվ մայր էր մտնում արեգակը բոլոր՝ որպես պղնձե մետաղադրամ:

16.01.2001

23:45

Գրելուց հետո զգացի, որ մրսում եմ: Բայց այս երկրում բոլորն են մրսում՝ ի՞նչ արտասովոր բան կա: Վրաս զցեցի ծածկոցն ու կռացած նստեցի, մինչև զգացի, որ սիրտս կանգնում է: Ես նրան խնդրեցի, որ աշխատի: Խոսեցի՝ ինչպես պետք է սրտի հետ խոսել՝ հանգիստ ու մեղմ: Մանավանդ որ առհասարակ հանգիստ եմ խոսում: Բայց նա կանգ առավ: Ասաց, որ հիշողությունը չի բավարարում: Եվ պահանջեց անջատել ամբողջ ծրագիրը:

Պատմվածքում զերեղված բանասարեղծությունը Խաչիկ Կարապետյանը՝ Հայաստանում համակարգչային անինսցիայի առաջին և լավագույն վարպետներից մեկը, գրել է սրտի տազնապին հեղուած մահվանից անմիջապես առաջ:

2001թ. հունվարի 24

Արատար ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երեքով նստած էինք դեպի վերև նեղացող, բարձր կլոր աթոռակներին, որոնք իրենց բարակ ոտքերի կեսին շրջանակ են ունենում: Կամրջի վրա էինք, բազրիքի մոտ, նայում էինք ցած ու խոտում էինք այդ ժողովրդի մասին: Մեզանից ահագին ներքև գետն էր, որի աջ ափին բուսածածկ բլրի ուղղահայաց լանջ էր, ձախ ափին ծառեր էին, որոնց արանքում երևում էին փայտաշեն, մի քիչ խումացած մեկուկես հարկանի տներ: Հասկացվում էր, որ դրանց թիկունքում ինչ-որ տեղ խճուղին էր:

- Հիմնականում ձկնորսությամբ են զբաղվել, - ասաց ձախ կողքիս նստածը, որին չեմ հիշում:
- Կարծես ձուկը շատ առատ է եղել, ու անհոգ ապրել են, - իմացածս հայտնեցի ես:
- Բայց արդեն հարյուր տարի է՝ ձուկ չեն որսում:
- Ինչի՞, - անհանգստացա ես, որ ձուկ ուտել սիրում էի, չնայած բուն ձկնորսության հանդեպ հակում չունեի:
- Որ գետը նորից ձուկ չգլի, - ասաց աջ կողքիս նստածը, որը միջնադարյան թուրք ճանապարհորդ էր:

Ես ավելի ուշադիր նայեցի ներքև ու նկատեցի, որ գետը համարյա ճահճակալած է՝ մինչև մեջտեղը եղեգներ ու բարձր մոլախոտեր էին բռնել: Իհարկե, գետը ոչ մեկի պետքը չէր, ոչ որ վաղուց նրան մոտ չէր եկել: Բայց դրանից էլ պետք էր ենթադրել, որ ձուկն հիմա լիքն է, վխտում է խոտերի արանքում, ես նույնիսկ աչքերս լարեցի, որ ջրի մեջ տեսնեմ նրանց խվիլոցը: Այդ ժամանակ ձախ կողքիս նստածը ձեռքը մեկնեց գետի ձախ ափի բարձր ուռենու կողմը, որի վերևում մի ձուկ էր թրթռում:

- Նայեք, թռչող ձուկ, - ասաց նա:

Ձուկը սկսեց ավելի բարձրանալ՝ թրթռալով, և մեկ-մեկուկես բուպեում հասավ համարյա մեզ: Ես ձեռքս կտրուկ առաջ գցեցի ու բռնեցի: Սովորական ձուկ էր՝ 35-40 սանտիմետրանոց, միայն թե դնչից մինչև պոչն ընկած հատվածը ներքևի մասում ուղղազիծ էր, այլ ոչ թե՛ կոր: Շատ չէր թալտում, դրա համար ես էլ արդեն բռունցքիս սեղմումը թուլացրի ու ձուկը ցույց տվեցի կողքիս նստածներին:

- Հրաշք է, - ասաց թուրք ճանապարհորդը, - ես արդեն լսել էի այս ձկան մասին:

Մի հատիկ ձուկը ո՛չ ուտելու էր մի քանի հոգով, ո՛չ էլ, քանի որ արտասովոր էր, ուզում էի հենց այնպես կողքիններիս նվիրել: Նրանից հոգնելով, որոշեցի հետ գցել: Բայց պարզվեց՝ ուժեղ կպած է ձեռքիս, կարծես՝ սոսնձած: Ես ձախ ձեռքով աջիս մատներս գոռով պոկեցի իր մարմնից, բայց ձուկը մնաց ափիս կպած և ինձ քաշում էր դեպի գետը: Սեղմեցի ոտքիս ու, կայծակնային արագությամբ տրորելով, պոկեցի ձեռքիցս: Բայց հիմա էլ ջինսիցս կպավ ու ծնկիս վերևի մասից շատ ուժեղ ինձ ձգում էր ջրի կողմը: Քանի որ նստած էի բարձր աթոռակի, իսկ կամրջի փայտե բազրիքը ցածր էր, նույնիսկ թեթևակի առաջ հակվելը կյանքի համար վտանգավոր էր:

- Օգնեցեք, - ցածր ասացի կողքիս նստածներին:

- Ի՞նչ նման է սովորական ձկան: Իսկ մուգ կապույտ ջինսի վրա ոնց որ մանրոտ թեփուկներով հասարակ ձուկ լինի, - ասաց ձախ կողքինս, որին չեմ հիշում:

Հանկարծ երկու ձեռքի կեռացրած մատներով թուրք ճանապարհորդը քաշեց-պոկեց ձուկը ոտքիցս: Ձուկը սկսեց նրա դիմաց օդում թրթռալ: Իսկ թուրքն ուներ մանր-զանգուր մազեր, որոնք դեմքի երկու կողմից առատանում էին դեպի ներքև: Եթե ձուկը կաշեր ճանապարհորդի մազերին, պրծում չէր ունենա:

Ու՞ր թաքնվեմ, ու՞ր գնամ. գլուխս պայթեց մտածելուց: Երանի ինձ չասեին. ինչ որ լինում էր, լինեք: Թե չէ՝ ի՞նչ վիճակ է վիճակս:

Ու՞ր, ու՞ր թաքնվեմ, գլուխս ու՞ր պահեմ: Գուրս զա՛ն տնից՝ փողոցներում թափառեմ: Ի՞նչ կիմանան, թե ո՞ր փողոցում եմ թափառում: Հետո մութը կընկնի, կգամ տուն: Բայց տուն եկա թե չէ, անմիջապես կբռնեն: Հիմար միտք էր, հիմարություն: Անիմաստ տեղը ժամանակ եմ կորցնում: Բայց չի էլ հաջողվում կետրոնանալ, որ խելքը գլխին բան մտածեմ:

Գնամ ծնողներիս մոտ: Չեմ ասի, որ թաքնվում եմ: Որ ասացի, մայրս կուշաթափվի, «Շտապ օգնությունը» կգա՝ ուշաթափության պատճառը կհարցնեն: Մայրս սուտ խոսել չգիտի, գլխի կընկնեն, որ ինչ-որ գաղտնիք կա. մեկ էլ տեսար զանգեցին ոստիկանություն:

Չասեմ, որ թաքնվում եմ: Ուրախ-ուրախ ընդունեն ինձ, օրը երեք-չորս անգամ պինդ կերցնեն, ցերեկները վարագույրի հետևից դուրս կնայեմ կամ կքնեմ, գիշերները կելնեմ մաքուր օդի: Մի ամիսը որ լրացավ, ավտոմատ հեռախոսից կզանգեմ տուն՝ կխոսեմ: Որ մի՛նչ երեսուն վայրկյան խոսեմ, չեն հասցնի գալ - ինձ ավտոմատի մոտ բռնացնել:

Բայց մայրս մի ամիս ինձ չի պահի: Շարաքը չլրացած կասի՝ վերադարձի՝ ընտանիքդ: Ես կասեմ՝ կինս գիտի, որ էստեղ եմ, ինքը կասի՝ դե որ էդպես է, զանգի՛ կնոջդ հետ խոսի: «Չեմ կարող», - կասեմ ես, ու նա կսկսի ինձ բացատրել. «Բոլոր ընտանիքներում էլ վեճ լինում է: Բայց խռովելը տղամարդուն չի սագում: Կինը կկարծի՝ սիրուհի ունես, հետո ինչքան համոզենք, որ մեր տանն ես եղել, չի հավատա ու երբեք քեզ չի ների»:

Չէ, մայրս չի թողնի, որ մի շաբաթից ավելի իրենց տանը մնամ: Հետո ծնողներիս տունն առաջին հերթին կստուգեն: Եթե մտքովս անցավ, որ նույնիսկ հեռախոսը կլսեն, ուրեմն, պարզ է, տունն անպայման կխուզարկեն:

Երևակայություն չունեմ:

Բայց մի բույս: Տանը: Իմ տանը թաքնվեմ: Կմտածեմ՝ հո գի՞ժ չի, որ իր տանը թաքնվի՝ տեղում տեղը բռնենք: Բայց ինչ էլ բարձր կարծիք ունեմ, չէ՞, մեր ոստիկանների մասին: Հա՛-հա՛: Հա-հա-հա-հա-հա՛: Հա-հա-հա՛: Ոչ մի բան էլ չեն մտածի: Կզան - Աստուծո՛ օրը կստուգեն, ժամերով կնստեն-կմնան: Մանավանդ վերևից էլ որ ասեն՝ ձեր քրեականներից ում բռնում-չեք բռնում՝ դուք գիտեք, բայց սրան պետք է գտնեք:

Ի՛նչ հիշաչարություն: Ի՞նչ եմ արել որ:

Գիշերը դուրս գամ, մոտենամ պռոնիկներին, իմանամ՝ ով է մենակ ապրում, գնանք իր մոտ, ներկայանամ որպես պռոնիկների վարքն ուսումնասիրող հոգեբան, ու խնդրեմ, որ ինձ իր տանը պահի: Կարելի է հետը մարդուկնոջ պես էլ ապրել, եթե շատ մաշված չլինի: Շատերը կան, որ ինքնակամ չեն դառել պռոնիկ, այլ, ո՞նց են ասում, հանգամանքների բերումով: Մեջները տանելի դեմքերով, աշխույժ բնավորությամբ աղջիկներ կան: Կարծեմ՝ նույնիսկ հարուստ ընտանիքների աղջիկներ կան, որ թեթևամտությունից են սկսել էդ գործով զբաղվել, բայց հետո, ո՞նց են ասում, հայտնվել են կյանքի հատակում ու կամքի ուժ չեն ունեցել վատ միջավայրից պոկվելու:

Ամեն օր իրար հետ չենք պառկի, պարզ է: Առավոտները հոգնած կզա, նայած թե ինչ հաճախորդներ է ունեցել՝ անտրամադիր կամ գոհ: Ես սուրճ կսարքեմ երկուսիս, նա, իմ մեծահոգությունից զարմացած, սիրտը կբացի ու ինձ կպատմի իր ապրումների մասին: Ես կբացատրեմ, թե ինչ պատճառով եմ դրանք առաջանում, նա կփաթաթվի ինձ ու անկողին քարշ կտա և, քանի որ փողի համար չի անի, վերջապես բավականություն կստանա:

Մի օր էլ կարող է ուզենա թողնել պոռնկությունը: Ես իմ կողմից, իհարկե, կողջունեմ, բայց ձեռքիս փողոն արդեն պրծած կլինի, ինքն էլ մասնագիտություն չունի. ստոր մարդիկ գործ տալիս պայման կդնեն, որ իրենց հաճույքներին էլ ծառայի, մենք, պարզ է, չենք համաձայնի՝ կմնանք մի կտոր հացի կարոտ:

Չէ, չեղավ:

Հետո՝ եթե էդ աղջիկն առանձին բնակարան ունենա, պետք է հաճախորդ բերելու համար օգտագործի: Ես էլ դրա շնորհիվ էի հայտնվելու իր տանը, չէ՞: Ուրեմն, ո՞նց կարող եմ ամբողջ օրն էդտեղ թաքնվել: Չհաշված որ մի գողական կամ էլ ոստիկան սիրելի կունենա, որ իր ամեն մի քայլին կհետևեն:

Անլուրջ գաղափար էր. էդ աշխարհի մարդկանցից ես գլուխ չեմ հանի:

Ընկերներիս մասին պետք է մտածել:

Բայց մոտ ընկերներիս տներում էլ չեմ կարող թաքնվել. հսկողության տակ կպահեն: Չնայած հետաքրքիր է, թե ու՞մ տանը կարող էի մնալ: Մեկ, երկու, երեք... Երեք... Երեք... Երեք... Չորս: Երևի: Երևի՝ չորս: Չորս ընկերը վատ չէ: Ափսոս վերջերս քիչ ենք շփվում: Դե, զբաղված էինք բոլորս. աշխատա՞նք, ընտանի՞ք:

Բայց կարևոր է, որ մի չորս ընկեր ունես, որ քեզ կընդունեն, ինչպես ասում են՝ տուն կթողնեն: Բոլորն էլ գիտեն, որ ես ոչ մի բանի ձեռք չեմ տա: Ոչնչի: Դե, տանը մարդ չեղած ժամանակ կարող է կոնֆետի ամանից մի-երկու հատ կոնֆետ վերցնեմ, հետո մնացածներն էնպես դասավորեմ, որ պակասը չզգացվի: Մեկ էլ հնարավոր է՝ նայեմ, թե խորդանոցում ինչ կա-չկա, որովհետև մարդիկ էնպիսի բաներ են զգում էնտեղ, որ մի ուրիշին շատ պետք է լինում, տարիներով չի գտնում:

Բայց ուրիշ բանի ձեռք չեմ տա. ո՛չ պահարան կբացեմ, ո՛չ դարակ դուրս կբաշեմ: Էդ կոնֆետն էլ հեռուստացույց նայելիս զբաղվելու համար եմ վերցնելու: Էնպես որ՝ ճիշտ կանեին, որ տուն թողնեին: Ո՞նց էլ մտքովս անցավ, որ կարող է ինձ տուն չթողնեին:

Բայց ի՞նչ օգուտ տուն թողնելուց, եթե չեն կարողանա թաքցնել: Նախ՝ բոլորի բնակարաններն էլ փոքր են: Հետո, ոնց էլ լինի, մի օր ազգ-բարեկամը հյուր կգան, երեխաները կմտնեն ծակուծուկերը, թեկուզ խորդանոց մտած լինեմ, կգտնեն: Ի՞նչ բացատրություն տան. իմիջիայրոց՝ սա էլ մեր ընկե՞րն է. թաքցնու՞մ ենք:

Իսկ եթե ֆուտբոլիստ դառնա՞մ՝ մեծ ֆուտբոլիստ: Ընկերներիցս մեկը քաղաքի ծայրամասում է ապրում: Որ կարողանամ մի քանի շաբաթ իր տանը դիմանալ, իրիկուններն ու շաբաթ կգամ, աչքից հեռու տեղում մի հատիկ խաբս կմշակեմ, մի հատիկ, բայց, որ ոչ մի պաշտպան ի վիճակի չլինի դեմն առնել, կգնամ մի բույլ թիմի մարզիչի ցույց կտամ ու կերաշխավորեմ, որ ամեն խաղում, մինչև հակառակորդն ինձ, ինչպես ֆուտբոլային մեկնաբաններն են ասում, չեզոքացնի, առնվազն մի գոլ կխփեն էդ ֆինտով: «Դե, մնացածը՝ դու գիտես»:

Մի տարում էդ թիմը կընկնի առաջին տեղ (խաղը՝ մի գոլ, հլը գումարի՞), ինձ կիրավիրեն հավաքական, հավաքականում էլ շատ գոլ կխփեն, բոլորն ինձ կպաշտեն, ու կմոռացվի-կզուրկանա անգույշ ասածս մի քանի բառը:

Բայց տարիքս էն չի: Երեսուցիներ ֆուտբոլի համար մի քիչ շատ է: Այ թե որտեղ է պետք իսկական մարզիչը: Որ ուշադրություն չդարձնի, թե իր համար գոլ խփողը քանի տարեկան է: Չնայած, ինչի՞ մասին եմ խոսում՝ մարզիչները որ էդքան հոտառություն ունենալին, հավաքականն էս օրը կընկնե՞ր:

Հետո՝ ես ֆուտբոլ լավ չեմ խաղում, միշտ էլ վատ եմ խաղացել. դժվար թե կարողանալի նոր խաբս մշակել:

Շատ հետաքրքիր կլինի, որ աշխատանքի գնամ, ու, քանի որ հիմա արձակուրդ եմ, էդ ժամերին ինձ ոչ ոք չնկատի: Չնայած՝ չորսրդրոն էնքան են գլուխ գոլում, թե քանի տարի չեն հանգստացել, որ լավ էլ կնկատեն ու կմտածեն, թե ուզում եմ աչքի ընկնել:

Բայց ի՞նչ աշխատանքի գնալու մասին եմ մտածում, երբ բոլորն զգուշացնում են, որ ինձ նախ գործից կազատեն, հետո կնստեցնեն: Ընչու է՞ ոմանք էլ կարծում են, թե նախ կըռնեն, իսկ տնօրենը, որպեսզի հետները գլուխ չդնի, անմիջապես աշխատանքից հեռացնելու հրաման կտա:

Իսկ եթե ուսանողական ընկերուհուս գտնեմ: Նա բոլորիս հետ ընկերական էր, չնայած մի քանիսս սիրահարված էինք իրեն: Հետո սկսեց ինձ ավելի լավ վերաբերվել, բայց ամեն ինչ մնում էր ընկերական, ու ես ուրիշ աղջիկ

կապեցի: Գիտեմ, որ ամուսնացել է, երեխա ունի, բայց ինձ մոռացած չի լինի: Էնպիսի դանդաղ շի հետ չի ամուսնացել, որ մոռանա: Ես, օրինակ, ինձ վատ զգացի, որ հետը չամուսնացա, գնաց էլ տեսակ դանդաղ շի բաժին դառավ:

Կասեմ էն ժամանակ սխալվել եմ՝ արի հիմա ամուսնանանք: Բայց շատ օրինավոր է՝ դանդաղ շից չի բաժանվի: Որ ճիշտն ասեմ՝ ես էլ կնոջիցս բաժանվելու պատճառ չունեմ: Հետո ի՞նչ իմանամ, որ ինձ թաքցնելու հարմարություն ունի:

Բայց իմ մեղքը ո՞րն է, որ թաքցնվեմ՝ չեմ հասկանում: Փողոցում գնում էի ինձ համար, մեկ էլ տեսախցիկը դեմ արին, թե հարցում ենք անցկացնում. «Ի՞նչ կարծիքի եք երկրի ներկայիս վիճակի մասին»: Պարզ է, ասի. «Ի՞նչ վիճակ, ի՞նչ երկիր: Երկիրն են թողել»: Գրանք էլ, էլ նկարողները, բռնեցին-նույնությամբ ցույց տվին: Հիմա բոլորն ասում են թե՛ քեզ կան մուտքում կխփեն, կան էլ գործ կսարքեն՝ մի քանի տարով որ հաստատ կնստեցնեն: «Բայց դուք էլ եք ամեն օր նույն բանն ասում»: «Սենք ասում ենք, ճիշտ է, բայց շատ-շատ՝ մեր շրջապատում, ի՞նչ գործ ունենք հեռուստացույցով ասենք, ու մեր գործին խփեն»:

Ի՞նչ անեմ: Գլուխս պայթեց մտածելուց: Հենց առավոտ կարող է հետևիցս գան: Իսկ լույսն ուր-որ է կբացվի: Թե՞ լույսն արդեն բացվում է...

Օգոստոս, 2000 թվական

Աղջկաս՝ Եվա Մարտիրոսյանին

Դեռ հեռվից երևում էր: Եվ ուշադրություն էր գրավում: Այդ պատճառով թվում էր, որ ինչ էլ անում էի, մեկ է, մոտենում էի հսկա կիսագնդին: Ինչպես առաջներում էին ասում՝ քայլերս ինձ բերեցին այստեղ: Իմ երբևէ տեսած ամենամեծ շենքն էր՝ անթերի սպիտակ: Քանի դեռ կանաչ ու խիտ էին տերևները, որ պարուրել էին այն տաղավարը, որտեղ վերջին ամիսներին լինում էի, կարող էի միայն պատկերացնել, թե այս կողմում ինչ կլինի: Երբ դեղնեցին ու կարմրեցին, արանքներից արդեն շողշողում էր տեղ-տեղ:

Ես հետ նայեցի ու տեսա, որ մենակ էի՝ ինչպես միշտ: Տաղավարի իմ մասը նույնիսկ ձայներ չէին հասնում, ավելի ճիշտ հասնում էին, բայց կարծես՝ մեկի կողմից ճգմած ու հողին հավասարեցրած: Տարօրինակ էր, թե տարօրինակ չէր, բայց կիսագունդը մի դուռ ուներ: Իր չափերի համեմատ փոքր, համարյա՝ աննկատելի: Ես նորից հետ նայեցի, բայց ծառուղին դատարկ էր. իմ կողմ էր գալիս միայն փողոցի սովորական մի կատու:

Ինձ համար հետաքրքիր էր, թե ինչ եմ հայտնաբերելու, ուստի հասկանալի չէր, թե ինչու՞ էի ձգձգում ներս մտնելը: Բայց մտնելու համար պետք էր որոշել, թե՝ ինչպես: Կիսագնդի դռան բռնակն արտաքին չէր, այլ ավտոմեքենաների դռների պես՝ ներկաված: Այդ պատճառով չհամարձակվեցի միանգամից քաշել արհեստական ինչ-որ նյութից սարքած բռնակի հորիզոնական շերտաձողը և սկսեցի զանգը փնտրել: Բայց դռան վրա զանգ հիշեցնող ոչ մի բան չկար: Կիսագունդը պատուհան չուներ, որ թխկթխկացնեի, մեկը ներսից պատասխաներ, ոչ էլ զանգն է որնից շատ հեռու լինում, որ գնայի՝ պատի որևէ ուրիշ հատվածում որոնեի:

Ես ձեռքս վեր մեկնեցի ու շոշափեցի դռան աջ անկյունը, որտեղ սովորաբար լինում է զանգը: Ինչ-որ պահի այն հանկարծ հնչեց: Ընդ որում՝ անընդհատ ու զնգոցով, ինչպես որ հարկն է, և ոչ թե՝ երաժշտական կամ կենդանական տարբեր ձայներով, որոնք միայն վերապահումով կարելի է զանգ կոչել: Ձեռքս ետ քաշեցի, բայց զնգոցը դեռ երկար ներսից լսվում էր: Եթե բացեին, պետք է բացատրեի, որ իրենցից է. զանգը երևի լավել-մնացել է անցքում: Կավելացնելի նաև, որ ինձ կարելի է համառ համարել, բայց անբաղաձարի ոչ մի դեպքում:

Միայն թե ցավալին այն էր, որ ոչ ոք չեկավ: Ես նորից շոշափեցի զանգի աներևույթ տեղը, որ նորից պատահաբար սեղմելի՝ անջատվեր:

Բայց զանգն ինքնիրեն լռեց: Մի քիչ էլ սպասեցի, դուռը բացվեց: Ուղղակի հետ զնաց ու քաշվեց ձախ կողմ: Ես մտա, իմ հետևից դուռն անաղմուկ փակվեց: Մեծ գմբեթավոր սրահում ամեն ինչ սպիտակ էր: Կարծես շատ մարդիկ կային, բայց չէին երևում, որովհետև դահլիճը կտրտված էր հաստ ու բարձր սպիտակ միջնորմներով: Երբ ուշադիր նայեցի, տեսա, որ սառույցից են:

Մտել էի ձմռան մեջ: Ոչ հեռու եղյամապատ ծառեր կային, տեղ-տեղ էլ գետնին ցելխ էր նշմարվում: Չգիտես, թե՞ որտեղի՞ց, քանի որ ես այստեղ մտել էի բողբոլվին չորային աշունից:

Առանց շտապելու առաջ քայլեցի: Երբ ինձ համար էլ անսպասելի շուռ եկա-հետ նայեցի, տեսա, որ հետևիցս գալիս է նույն սովորական կատուն:

Մտածեցի, թե՞ երանի ահռելի կիսագնդի վրա աստիճաններ լինեին, թեկուզ շենքերին կպած մետաղե հրշեջ սանդուղքների պես: Կարելի էր զգույշ կողքերից բռնած բարձրանալ կիսագնդի գագաթն ու տեսնել, թե դեռ քանի եղանակ ունես առջևում: Գարնան կիսագունդը գուցե մուգ կապույտ լիներ, աշնանը՝ կարմիր, իսկ ամառվանը ազաթի գույն կունենար: Բայց ամռան կիսագունդը կարող էր նաև լրիվ թափանցիկ լինել,

այդ ժամանակ հնարավոր է, որ կիսագնդերի հաշիվը խառնեիր:

2000 թվականի նոյեմբերի 30

Չմեռվա ժամը 7-ը նման բաների համար շատ ուշ է: Ավելի շուտն էլ, ասենք՝ ցերեկվա չորսը կամ թեկուզ հինգը, ծիծաղելի է: Չգնալ չեմ կարող, քսան օր է՝ սպասում էի, բայց գնալուց էլ՝ ինչքան մոտենում, էնքան փոշմանում եմ: Ամենադժվարը վերջին մի քանի հարյուր մետրն է, որովհետև էդ մասում շատ խիտ են կանգնած: Երեք հոգի մի տեղ՝ պատիճն հենված, հինգ հոգի՝ ծառի տակ, տասը մոտիկ շինարարության բետոնե սալերին են նստած, մի քանիսն էլ գնում-գալիս են սրանց արանքում: Ջույգ-գույգ կանայք են կանգնած՝ ժամադրվածներ են: Չգիտես ում երեխաները ծառերի բների մոտ խաղում են մթան մեջ:

Քայլում եմ՝ գլուխս կախ, բայց շատ կախ՝ չի կարելի, բարձրացնում եմ շատ բարձր է, կմտածեմ՝ քիթը ցցել է: Լավ է, որ մենակ եմ, չնայած՝ էսքան տեղն է լավ մենակ, ներսում պետք է, որ գոնե մեկը հետդ լինի:

Հռոչոց եկավ, բայց ինձ չի վերաբերում: Ես գիտեմ, որ ինձ չի վերաբերում՝ ի՞նչ հռոչալու բան եմ արել: Բայց սրանք եթե մի ամիս առաջ հռոչալու են, կսպասեն, մինչև մոտներով անցնելու լինես, նոր հռոչան: Անասուն... ներ... Ինչ-որ բան էլ են ասում բարձր, բայց ինձ հետ ի՞նչ կապ ունի՝ չեմ հասկանում: Այսինքն՝ ոչ մի կապ էլ չունի: Հետո որ օրերով հիշեմ, երևի կապը գտնեմ, բայց ավելի լավ է՝ ոչ էլ գտնեմ:

Իսկ հիմա հավասարվել եմ իրենց, անցնու՛մ եմ, արդեն անցա: Այ հիմա՝ անցա: Մուտքը շատ լուսավոր է, լիքը մարդիկ կան հավաքված: Էլի ինձ են նայում. եթե բոլորը չէ՝ մեծ մասը: Դե արի ու մի հատը ծախի: Էս պայմաններում: Ո՞նց ծախեմ: Բայց փող է տված, չէ՞, ափսոս չի՞: Մի շրջան անեմ, գամ՝ ծախեմ: Բայց, չէ, շրջան անել չեմ կարող, նույն ճանապարհը երկրորդ անգամ անցնելու ի վիճակի չեմ: Չեմ կարող, համ էլ՝ կուշանամ: Չնայած, ժամանակին են մտնում՝ ուշ են սկսում՝ ահավոր ուշ: Իսկ որ դու ուշ գաս՝ մուտքը փակ կլինի:

Ծախե՞մ-չծախե՞մ, ծախե՞մ-չծախե՞մ: Բայց երևի մի հատը ոչ մեկը չուզի: Կհամոզեն, որ երկուսը ծախեմ, բայց ես համաձայն չեմ: Երկուսին համաձայն չեմ՝ իմը չեմ ուզում ծախել:

Բայց եթե չէր գալու՝ թող սկզբից ասեր: Իհարկե, պատճառաբանություն ունի. առնելուց ինձ չես հարցրել: Էլ չասած, որ խուսափում ես ճանապարհը միասին անցնելուց: «Ամբողջ ճանապարհը չէ՝ մի քանի տեղ, դա էդքան կարևոր է»: «Քեզ համար որ կարևոր է, ինձ համար էլ է կարևոր: Հետո՞ դու ինքդ երբեք ինձ հետ չես գալիս»:

Դա ճիշտ է. ես ինքս երբեք հետը չեմ գնում: Վախ, էս ինչ տանջանք է:

Չեմ ծախի: Թող փողը կորչի՝ մենակ իմ փողը չի, կորչում է՝ կորչի: Մոտենում եմ մուտքի բազմությանը, բայց չեմ ուզում արանքներից խցկվել՝ չեմ կարող: Ներողություն՝ն, ասում եմ, ներողություն՝ն՝ ոչ ոք չի լսում, երևի ցածր եմ խոսում: Մի քիչ կանգնելուց հետո մեկը դուրս է գալիս ինչ-որ բան հայտարարելու, բոլորը շրջապատում են, ես մոտենում եմ հսկիչին:

- Էդ տեսքով ներս չենք թողնի:
- Ի՞նչ տեսք է որ, նորմալ մարդու տեսք է:
- Նորմալ չի: Չեմ թողնի:
- Ի՞նչը նորմալ չի, նորմալ է:
- Նորմալ չի: Դու քեզ հայելու մեջ չե՞ս տեսել:
- Լա՛վ, թող էլի՛:

Ջզվում եմ ինքս ինձնից, որ խնդրում եմ, գիտեի, որ էսպես էլ կլինի. իրիկունը կգամ, կխնդրեմ ու կզզվեմ ինքս

ինձնից: Բայց եթե չխնդրեմ, շուտով մուտքը կփակեն, դուրս եկածին շրջապատածներն էլ հետ կդառնան, ու ինձ ամենավերջը կմնեն:

- Թողեք՝ մտնի, ինչի՞ համար չեք թողնում,- ասում է մի մարդ:
- Էս տեսքով ո՞նց թողնեն:
- Ի՞նչ կա որ, առանձնապես ի՞նչ մի տեսք է:
- Իմ գործը ես գիտեմ. սա թողնելու բան չի, իզուր լավամարդ մի եղի:
- Իսկ որտե՞ղ է գրված՝ թողնելու չի: Չթողնես՝ կբողոքեմ:

Ինչ լավ մարդ է իսկականից՝ ոչ մեկը չէր խնդրել, որ միջնորդեր: Շնորհակալ եմ՝ ասում եմ քթիս տակ ու մտնում: Ոչ մի տարօրինակ բան չունեմ:

Նախասարահում բողոքն ինձ են նայում: Մտնում եմ դահլիճ. ժխտր է, բայց շատերը, որ արդեն տեղերն են նստել, ուշադիր, աչքերը չռած, իրար հետ խոսելը դադարեցնելով՝ ինձ են նայում: Դրանց հայացքների տակ մի կերպ գտնում եմ իմ տեղն ու նստում: Ուզում եմ տեսնել՝ ծանոթ մարդ կա՞, բայց գիտեմ, որ բողոքն սպասում են շուտ գալուս, ու մնում եմ անշարժ: Շուրջս մի կողմից երեք, մյուս կողմից չորս տեղ է ազատ: Այ եթե հիմա սկսվեր, ինչ լավ կլիներ: Մի քանի բուպե էլ անցավ. իսկական ժամանակն է սկսելու: Մի հինգ բուպե էլ անցավ: Պետք է սկսել, չէ՞: Մի քանիսը սուլում են: Մի երկու բուպեից կսկսվի: Համարյա բողոքով ծափ են տալիս: Չնայած՝ դա էլ մի բան չի:

Ու գալիս եմ: Երկու հոգի՝ մի կողմից, չորս հոգի՝ մյուս: Անմիջապես առաջարկում են, որ, եթե մենակ եմ, տեղս փոխեմ իրենց երկու ընկերոջ հետ: Դրանք վերջին շարքում պետք է նստեին. հիմա մեր շարքի առաջ կանգնած սպասում են, որ մյուսներն ինձ համոզեն: Ինչի՞ համար պետք է փոխեմ. ինչ է թե մենակ եմ: Ճիշտ է, վերջին շարքում լավ եմ զգում, որ հետևող մարդ չկա նստած, բայց հեռու է, ու իրենց ասելով չէ, որ պետք է գնամ: Գնա՝ բողոքով միասին նստենք: Երկուս, երկուս՝ չորս, չորս էլ՝ կանի՝ ուր: Ուրեմն, ուզում են ուրով նստեն միասին: Չեմ հասկանում՝ ի՞նչ իմաստ կա ուրով նստելու մեջ: Ես չեմ գնա. չեմ-գը՝-նա՞: Տուր հետևի կնիքը նայենք: Դու մեզնից երեք օր ուշ ես առել, բա ինչի՞ համար մեզ ասին՝ իրար կողք ուր տեղ չկա: Ես չգիտեմ, իրենց հարցրեք, ինձ երկու տեղ էր պետք՝ երկուսն են առել:

Որ էդ ձևով ես խոսում՝ մենք էլ չենք ուզում, որ քո տեսքով մեր կողքը նստես: Ի՞նչ տեսք է որ: Հենց քո էդ տեսքով: Նորմալ տեսք է, շատ սովորական, շատ սովորական տեսք է. ի՞նչ տեսք է որ: Դա՞ է սովորական. բա արտասովորը ո՞րն է: Դե որ արտասովոր է, ասեք՝ ի՞նչն է արտասովոր: Շատ ստիպես՝ կասենք: Ասեք: Ու կասենք:

- Ի՞նչ է պատահել, թողեք՝ մարդը հանգիստ նստի իր տեղը,- ասում է մեզ թիկունքի կողմից մոտեցած ընկերս:
- Մենք ուզում ենք, որ մեր ընկերների հետ փոխի տեղը:
- Իսկ ինքը չի ուզում փոխի՝ ուրեմն, ինչի՞ փոխի:
- Դե, լավ, բան չենք ասում՝ թող նստի: Չնայած էդ տեսքով՝ ճիշտ չի էստեղ նստելը:
- Դուք մի՛ սովորեցրեք, թե ինչ տեսքով նստի:

Նայում եմ էն կողմը, որտեղ ընկերս միշտ նստում է, տեսնեմ՝ կինը ձեռքով է անում: Ես էլ եմ ձեռքով անում իրեն ու, կողքիս դատարկ աթոռը ցույց տալով, հասկացնում, որ մենակ եմ եկել, բայց իրեն բարևում էր: Նա գլխով է անում:

- Հը՞, կարո՞ղ է մտածեցիր, որ ընկեր չունես, վախեցար, որ ընկեր չունե՞ս,- ասում է ընկերս:

Երևի վախեցել էի՝ չգիտեմ:

Նա գնում-նստում է իր տեղը՝ կնոջ կողքին: Ես նստած սպասում եմ, որ սկսվի. ուր-որ է կսկսվի: Պետք է որ արդեն սկսվի, չգիտեմ:

Նոյեմբերի 12, 2000 թվական

Հորս՝ Պարույր Մարտիրոսյանին

Ճիշտ չէ, որ փողոցի մեջտեղով տրամվայ անցնի, երբ երկու մայթերին բնակելի շենքեր կան: Գետինը դողդուս է, դողդուցը փոխանցվում է շենքերի հիմքերին, հետո՝ բարձրանում վերև: Մանավանդ առավոտ, երբ ո՛չ դրսում մարդ-մարդաշունչ կա, ո՛չ էլ տանը՝ շարժում: Չես հասկանում՝ ում համար է աշխատելու տրամվայը: Եթե ձմռանը, երբ ուշ է լուսանում, պատահաբար վաղ վեր կենաս՝ կնկատես, որ լույսերը տներում վառվում են ժամը ութն անց 10-15-ից ոչ շուտ: Իսկ առաջին տրամվայի գրնգուն, կայտառ սլացքը մարդուն քնից հանում է ժամը 7-ին:

Հետո արի՛ ու պառկած հաշվի անցող-դարձող տրամվայները, մինչև առիթ լինի անկողնուց ելնելու: Հետո արի՛ ու օրվա հոգսը հիշի առավոտվա ժամը յոթից սկսած, երբ որ, մեկ է, ամեն ինչ իր հունով է գնալու:

Իմիջիայրոց, ես ոչ թե առհասարակ տրամվային եմ դեմ: Տրամվայն էլ է փոխադրամիջոց: Մյուսների համեմատ՝ էժան, թոշակառուների համար՝ ձրի. երևի, շատ գոհ եմ: Երեխաների կողմից՝ հատկապես սիրված. ես իմ փոքրությունից էլ եմ հիշում: Մի խոսքով, լավ էլ փոխադրամիջոց է, բայց երբ գոնե փողոցի մի կողմում են շենքեր, մյուս կողմում զբոսայգի է կամ՝ գետը, ու տրամվայն էդ կողմով է անցնում: Սարսափելի չէ՝ նաև, երբ շուրջը հիմնարկներ են, ցերեկ է: Բայց եթե շուրջը բնակելի՝ շենքեր են... Ընտանիքներն օրվա բոլոր ժամերին են դատապարտված ցնցումներին ու զնգզնգոցներին: Պետք չէ անտեսել, որ մանավանդ նորակառույց անհուսալի շենքերը տարիների ու տասնամյակների ընթացքում կարող են խարխլվել: Իսկ երկրաշարժի դեպքում ինչքան վտանգավոր են նորակառույց բազմահարկերը, դառը փորձով գիտենք: Ավելի բարվոք չէ հինգհարկանիների վիճակը, որոնք 30-40 տարի առաջ սարքում էին՝ ժամանակավոր, յուրաքանչյուր համար, մինչև լավ օրերը գան, բայց երևի զարգացումն ու բարելավումը մոլորակի բոլոր վայրերի համար չէ. տասնյակ հազարավոր մարդիկ առհավետ մնացին նման կացարանների գերին:

Կան մարդիկ, որոնք վարժվում են տրամվայի զնգզնգոցին: Բայց նրանք առանձնահատուկ տեսակ են: Չվարժողներին չի օգնի ո՛չ ուրիշի փորձը, ո՛չ՝ փորձի փոխանակումը: Ինչպես որ չեն օգնում քնաբերները, քանի դեռ հատուկ տրամվայի դեմ քնաբեր չեն հնարել: Այսինքն՝ քնաբեր, որը նպաստում է ոչ թե շուտ քնելուն, որովհետև ես, օրինակ, արագ եմ քնում, այլ՝ շուտ չզարթնելուն՝ առաջին պատահած տրամվայի ձայնից:

Կարելի է վերջապես անիվների երկաթն ավելի փափուկ նյութով պատել, որը բնության մեջ անպայման գոյություն կունենա: Չնայած իմ գործը չէ, բայց չեմ զլանա գիտնականներին հուշել, որ հնարավոր է նաև զինագործների ճանապարհով գնալ: Ինչու՞ կարելի է ատրճանակին խլացուցիչ հագցնել ու կրակոցի ահավոր ճայթյունը խեղդել, իսկ տրամվայի անիվներին ոչ մի բան չեն հարմարեցնում:

Մարդկանց կյանքի, առողջության մասին չեն հոգում, թե չէ մի քանի բոպետում իրենց գլուխներում էլ տարբերակներ կծագեին, ինչպես որ իմ գլխում ծագեցին:

Նոր անցած տրամվայը հազիվ երկրորդ կանգառից է շարժվել հիմա: Առավոտվա տասն անց կեսի մոտերքն է: Ուրեմն՝ ձախ շարքի առջևից երկրորդ միտոզանոց նստելատեղին մի ութսունհինգ տարեկան տատիկ է նստած, աջից առաջին երկտեղանոց նստարանին՝ մի հիսունհինգին մոտ սպիտակ բեղերով տղամարդ: Մի քանի դատարկ նստարան հետ նստած է միջին տարիքի կին՝ իր տասնհինգ-տասնվեց տարեկան աղջկա հետ: Իսկ հաջորդ նստարանին մենակ նստած է յոթանասունհինգին մոտ, բայց դեռ պինդ մի ծերունի՝ ձեռքին մոխրագույն կտորից պայտասակ ու նոր ավել: Նա կիջնի մերից հաշված երրորդ՝ տոնավաճառի կանգառում:

2001 թ. հունվարի 23

Մարգիս Համալքաշյանին

Ես քնած էի խոր: Ոչ թե «խորը քնած էի», այլ հենց՝ «քնած էի խոր»: Համենայն դեպս, այդպես պատասխանեցի ընկերներիցս մեկին, որն առանց զանգելու եկել էր մեր տուն իմանալու, թե չե՞մ միանա իրենց մոտակա սրճարանում: Արտահայտությունը կրկնվում էր իմ ամենապիրաժ բանաստեղծություններից մեկում, որն ուսանող ժամանակս անգլիերէնի սովորելու արտասանում էի աղջիկների մոտ: Վաղուց առիթ չէր եղել, որ վերհիշեի «Քրիստոսը Չիթենյաց լեռան վրա» վերնագրով այդ սոնետը, բայց մի-երկու բառի տարբերությամբ, կարծես, սա էր.

**Ու երբ որդին Աստըծո, լեռան վրա Չիթենյաց,
Քանաստեղծի իր վտիտ բազուկները պարզած վեր՝
Խորասուզվեց գլխովին վշտերի մեջ ու գգաց,
Թե իր դեմ դավ են նյութել երախտամոռ ընկերներ,**

**Իջավ ներքև՝ նրանց մոտ, ով սպասում էր իրեն՝
Երազելով դառնալ մոգ և մարգարե ու արքա,
Մակայն նրանք, կարկամած, քնում էին տարորեն.
Եվ սկսեց նա գոչել. «Աստված չկա՛, ո՛չ, չկա՛ »:**

**Նրանք քնում էին խոր: «Բարեկամներ, ձեզ նոր լուր...
Ես արնոտ եմ, ցավազար և լիովին ջարդուփշուր,
Քանգի անհուն երկնքին դիպավ ճակատըս այսօր:**

**Ձեզ խաբե՛լ եմ, եղբայրներ: Վիհ է, վիհ է, խորխորատ:
Ա՛հ, թափուր է Աստծուց սեղանն, ուր գոհ եմ անպարտ...
Աստված չկա, չիք Աստված...»: Նրանք քնու՛մ էին խոր:**

Ում որ կհետաքրքրի՝ բանաստեղծությունը, որի հեղինակը Ֆելիքս Արվերն է, հայերեն լույս է տեսել 1976-ին՝ «Ֆրանսիական քնարերգության ծաղկաքաղ» ժողովածուի մեջ:

Ուրեմն, մարդը եկել էր ասելու, թե արդեն մարտն է, գարուն, տաք՝ ես էլ դուրս գամ-միանամ իրենց: Ասացի՝ «քնած էի խոր», չնայած հնարավոր է, որ շատ խորն էլ քնած չէի. ցերեկը հազվադեպ եմ խորը քնում՝ փողոցի ու ներսի ձայների պատճառով: Հետո ասացի՝ հա՛, ու նա թողեց գնաց:

Դե, ճիշտ է, իհարկե, որ աղմուկը խանգարել էր, որ «քնեի խոր», բայց լավ քնաթաթախ էի, շարժվում էի դանդաղ ու որոշ բաներ անում էի երկու անգամ: Օրինակ. երկու անգամ մտա լողասենյակ ու առանց լվացվելու դուրս եկա: Կամ գնացի միջանցք, որ կոշիկ հագնեմ, բայց մոռացա, վերադարձա սենյակ: Իսկ թե գրասեղանի վրա ի՞նչ էի փնտրում, այդպես էլ, պարզ է, չհիշեցի:

Մի խոսքով, դուրս գալու պատրաստվեցի քունը գլուխը մարդու պես, բայց, որովհետև տեղից դանդաղաշարժ եմ, երևի՝ ավելի դանդաղ: Դռան մոտ էի՝ զանգ եկավ, խոսեցի, հետո ես էլ մի-երկու տեղ զանգեցի, ու երբ որ ոտքս տնից դուրս էի դնում, անցել էր մի ժամ քսան լոպս:

Շա՞տ է, թե՞ չէ: Հաշվի պետք է առնենք, որ սրճարանում էին, փողոցում չէին ու մի քանի հոգով էին: Բայց վատ կողմն էլ կար՝ որ սրճարանը բացօթյա էր, իսկ մարտի առաջին օրերին, ինչ էլ որ ասեն, բացօթյա սրճարանը մատելու տեղ չի:

Բայց դա պատճառ չէր, որ անեին այն, ինչ որ արել էին. դա պատճառ չէր, որ ցերեկվա ժամը երեքին սրճարանը հավաքեին: Այգում, որտեղ սրճարանն էր, սեղան-աթոռների հետքն էլ չկար, և ոչ էլ մարդ կար, որ հարցուփորձ անեի:

Պարզ է, որ իրենց արածը բանի նման չէր, բայց ես էլ ուշացել էի համարյա ժամուկես:

«Գիտե՞ք, չե՞, ոնց եղավ, որ չեկա սրճարան ձեզ հանդիպելու: Դե, քնաթաթախ էի, տեսար, դանդաղ էի շարժվում: Բայց որ զգացի՝ ուշանում եմ, սկսեցի շտապել: Բայց որ շտապում ես, ճիշտ տեղում պետք է շտապես: Ես բռնեցի ու ստորգետնյա անցում չմտա «Ձկան խանութի» մոտ, այլ վերևով անցա: Այդ մասում էլ, հիշում եք, հետիոտնի անցում ընդհանրապես չկա, և մեքենաներն, ընթացքը չդանդաղեցնելով՝ շրջադարձը մայթին շատ մոտ են անում:

Դե, հենց ես խախտումն արեցի՝ ոտք դրեցի փողոց, մեքենան խփեց: Լավ էր, որ տակը չընկա, ընկա մյուս կողքը: Բայց թե գլուխս ուժեղ խփեցի ասֆալտին, ու ինձ ուղեղի ցնցումով տարան հիվանդանոց»:

Միայն թե ի՞նչ զգվելի բան պետք է լինի գլխով ասֆալտին խփվելը, չե՞: Չարժեր, թյու՛ր, չարժեր, որ ուշանալս արդարացնելու համար հենց այդ պատճառը հորինեի:

2001 թ. մարտի 2

Վահրամ Մարտիրոսյանին

Ժամը տասներկուսի մոտ էր: Շատ ուշ չէր, գիշերվա երեքին էլ էի եկել, բայց ուշ էր ցերեկվա հինգի համեմատ, երբ խոստացել էի գալ: Արժեր, ուրեմն, մի քիչ էլ ձգել, որ տանը բոլորը քնած լինեին, որովհետև մյուս առավոտ բացատրվելն ավելի հեշտ է: Բայց խմիչքը վերջացել էր, մյուսներն էլ ցրվում էին. հո՞ղքսում չէի թափառելու, մինչև տնեցիները քնեին:

Էսպիսի դեպքում, ինձ հուսադրելու համար, տան պատուհաններին չէի նայում, նայում էի ուրիշ կողմ: Ու աչքս որ ընկնում էր, միշտ փախցնում էի, բայց հասցնելով նկատել՝ լույսերը վառվում են, թե՞ չէ: Որովհետև դեպքեր պատահել են, որ քնած են եղել: Հենց էս նույն ժամին. իսկ ինչի՞նչ էր:

Հիմա էլ աչքերս փախցրի, բայց, պարզվեց ճաշասենյակի լույսը վառն է: Հետո նորմալ նայեցի ու տեսա, որ իմ սենյակում էլ է լույս վառվում: Ի՞նչ գործ ուներ իմ սենյակում լույսը: Մենակ թե փոշեծծիչ միացրած չլինեին. ուրիշ բան չեմ ուզում: Մենակ էս ժամին փոշեծծիչ միացրած չլինեին, որն առած քեզ սենյակից սենյակ են քշում մաքրելու պատրվակով:

Աստիճաններով բարձրանալիս ականջս ձենի էր: Բայց ձեն չկար. սովորական ձեներ էին: Մեր հարկում կանգ առա ու ինձ թափ տվեցի: Ինչ-որ բան ինձ նեղում էր. գոտի՞ս էր պինդ ձգած, թե՞ ինչ: Կամ էլ խմիչքն էր հասել կոկորդիս: Համենայն դեպս, գոտիս թուլացրի, կանգնեցի մի քիչ, նոր փորձեցի դուռը բացել: Եթե կարողանամ բանալիովս բացել, ուրեմն, ներսից բանալին հանել են՝ ինձնից հույսները կտրած: Էդ ժամանակ կուրախսանան, որ գոնե կեսգիշերից շուտ են եկել:

Բանալիներին կապոցը գոտուս է ամրացված, խուսափում եմ ամեն անգամ հանել, քանի որ մետաղե լեզվակը պինդ է ու կարող է գոռից ջարդվել: Բայց առանց բանալիները գոտուց անջատելու դուռը բացելն է դժվար: Որովհետև բանալին մի պտույտ հանգիստ անում է բայց երկրորդին կարող է լավել կապոցի մյուս բանալիների մեջ: Էդ ժամանակ արդեն ինքը պետք է պտտվես, որ բանալին շարժվի ու դուռը բացի:

Ճիշտ է, միշտ հաջողվում է բացել: Վերջին րոպեին մեկ էլ բանալին մի քիչ կշարժվի, դու էլ ժամացույցի սլաքի հակառակ կթեքվես, ու արդեն հանգիստ կարող ես անցնել ներս:

Բանալին մտցրի անցքը. իմ բախտից ներսից բանալի չկար: Մահուն պտտեցի երկու անգամ՝ կողքով դռանը կպած:

Տանը փոշեծծիչի աղմուկ չորսացի: Միջանցքում վերարկուս հանեցի, ճաշասենյակ գնալուց տեսա, որ սենյակիս դուռը կիսաբաց է: Գլուխս մտցրի (լույսը դեռ վառն էր), տեսնեմ՝ նստած են ներսը: Իմ տեղում չէի՝ համակարգիչի առաջ, այլ՝ սուրճի փոքր սեղանի մոտ: Նստած էի սեղանին հակառակ, բայց՝ ոչ թե աթոռին հեծած, այլ՝ կողքանց: Հագիս կանաչ պոլիսթիլից ձմեռային խշխշան բաճկոն էր, գլխիս՝ դահուկորդի սև գլխարկ, օձիքիս վրայից կապած էր կարմիր վզնոց, շավարս դարչնագույն էր, աչքերիս՝ դարչնագույն մեծ ապակիներով արևային ակնոց: Դրանցից ոչ մեկից ես չունեի: Ոչ էլ սիրում էի. զգվում էի: Չհաշված՝ որ գլխարկիս տակից ցցված հարդագույն ուղիղ մազերը ոչ մի կապ չունեին իմ սև մազերի հետ:

Տեսա, որ նստած էի ոտքս ոտքիս զցած, որի պատճառով շավարիս փողքը վեր էր քաշվել, և նրա ու սապոգիս միջև բացվել էր սրունքը. այն, երևի ամբողջ մարմնիս նման, վարդագույն գուտապերչից էր:

Սկզբում ուզեցի ներս գնալ, բայց հետո միտքս փոխեցի ու մտա հյուրասենյակ:

2001թ. հունվարի 5

Երկար ժամանակ, թերևս դարեր շարունակ հայ գրողը ազգային հոգևերի օղագոտու մեջ էր գտնվում:

Այսօր, երբ փոքրիշատե նախանշվել են Հայաստան-երկրի շրջագծերը, օղագոտուց դուրս գալու միտումը իր ընթացքն է առնում: Վահրամ Մարտիրոսյանի «Սողանք» վեպը, ունենալով ազգային կենսաբանական արխիտեկտոնիկա, այդ ուղու վրա է: Թուլացնելով օղագոտին, միտում է մտնել ավելի տարածուն և այլակազմ բեռի տակ՝ ընդհանրացած մարդու բեռի տակ: Թեպետ այս պարագան ևս ունի իր օղագոտին, սակայն նրա պարագիծը ավելի ընդգրկուն է: Նրա արգելափակոցը պահպանում է մարդ-արարածի բարոյականությունը, նրա լինելության նորմերը:

«Սողանք» վեպն իր առանձնահատուկ տեղն ունի մեր այսօրվա գրականության մեջ:

Աղասի Այվազյան

Զգիտեմ՝ Վահրամ Մարտիրոսյանի «Սողանք» վեպը բացե՞լ է «նոր էջ 20-րդ (կամ գուցե 21-րդ) դարի հայ գրականության մեջ», թե՞ չի բացել: Մի բան գիտեմ. գիրքը կարդացի շատ արագ և դժգոհում էի, երբ առօրյա գործերն ինձ շեղում էին կարդալուց: Շեղվելուց զգում էի, որ սկսում եմ խոսել հերոսների բառապաշարով եւ ինտոնացիաներով:

Արամ Աբրահամյան

Հայերեն գրքի սպառման պատկերացումները փոխեց Վահրամ Մարտիրոսյանի «Սողանք» վեպը: Տեղական մասշտաբների համեմատ այն կարելի է համարել վերջին 10 տարիների առաջին բեստսելերը:

Վահան Բշիսանյան

...էի պատկերացում, թե հեղինակն ինչպես կարող էր «Սողանքից» հաջողությամբ «տեղափոխվել» միջնադար... Սկսեցի կարդալ «Հանուն իսաչի ծպրվածները» և տարվեցի, սուզվեցի Բեհեմնի ամրոցի կյանքի մեջ, սկսեցի ապրել գրքի հերոսների կյանքով: Վեպի ոճն ապշեցուցիչ է՝ հավատում ես, որ կարողում ես հենց իր՝ քահանայի զգացածի ու տեսածի շարադրանքը: Գիրքը կարդալուց ու փակելուց հետո, մեջդ գերիշխում է երկու զգացում՝ ավստասնք, որ վեպն ավարտվեց եւ շնորհակալության առ Վահրամ Մարտիրոսյան:

Արեգ Գրիգորյան

տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Հանուն իսաչի ծպրվածները» վեպը՝ հղացված որպես պարականոն ժամանակագրություն, նորարարական է տարբեր իմաստներով, ընթերցողին գրավում է պատմությանը զգված հայացքի թարմությամբ, և, իմ կարծիքով, մեկն է ետխորհրդային շրջանի սակավաթիվ ստեղծագործություններից, որոնք մշակութային արտահայտության նոր հնարավորություններ են բացահայտում:

Հրաչ Բալայան

«Հանուն իսաչի ծպրվածները» ըստ ձևի պարզ կառուցվածք ունի, բայց գրեթե անպարագիծ է բովանդակային շերտերով: Դա վեպ-համապատկեր է, ուր գիտակցության հոսքի ինտելեկտուալ հագեցումները զգացական հաճույքի են փոխարկվում՝ գեղարվեստորեն նրբահյուս ոճի, մաքուր ու թրծված խոսքի շարահյուսությամբ:

Սերգեյ Մարինյան

սկադեմիկոս